մասնաւոր ինքնաբոյս անտառակներ, որք շատ ցանցալ են և ծառերն փոքր։

Քանի խոնարհ իջնանք՝ ջրերն կառատանան, յրստակ և սառն նաև ջրաղացք մի դարձնելու ջրի չափ առատ ջրեր տեղ տեղ դուրս կը բղխին, կոռոգեն իւրեանց շուրջն, հիանալի մարգագետիններն կանաչագոյն զարդարելով՝ շքեղ տեսարաններ կը սփռեն իւրեանց շուրջն, մանաւանդ այս լեռան հարաւային երեսի ստորոտներն, որք տարւոյն երեք եղանակներու մէջ փոփոխութիւն չունին. միշտ դարուն է, միշտ կանաչ մարգագետին ունին. ամրան եղանակին դեղնագոյն ծաղիկք կանաչ մարգագետնոյն երեսը հիանալի նշաձ են, իւրեանց վառվրուն արտացոլումն սփռած են իւրեանց շուրջն— հեռի և մօտ վայրեր, ամեն ձոր, ամեն տափարակ, ամեն ծմակ և հովիտ, ուր առատ ջուր կը հոսի, որոց իւրաքանչիւրն նոր նոր տեսարան կընծայէ շտապաւ անցնող անցորդին, կը յիշեցնէ նաև թէ մեր նախնիք խաղաղ հոգւով, անվրդով սրտով լի ու լի վայելած են այս անմահական ջրերն և տեսարաններն. իսկ այս օր . . . ։

Սուկաւէտի շուրջն կան տասնի չափ քուրդ գիւղօրայք, որք թէ և թուով փոքր [1] սակայն ընդարձակ վայրեր գրաւած են, կը սնուցանեն ոչխար միայն, սերմանած են սակաւ ինչ ցորեան, գարի, բայց այդ բոյ-

---

1. Իւրաքանչիւր քրդական տան ընակիչն 2—3 եւ կամ առ առաւելն չորս անձ կը հաշուենք։ շատ քիչ բացառութիւն կը կազմէ որ 5—8 անձ պատահեն մի տան մէջ, իսկ Հայոց մի տան ընակիչն թուով հաւասար է միջին հաշուով 4—5 տուն կազմող քրդու, Հայոց մէջ այնպիսի տներ կան որ հաւասար են մի քրդական գիւղի ընակչաց թուոյն, որք եթէ քրդական կեանք ունենային մի մի գիւղ պիտի կազմէին։